

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(Գ Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք)

ԱՆՏԵՍՈՒԱԾ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՄԸ

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ ԱՅ ՈՐԴԻՈՅՆ ՄԱՍԻՆ

Պատկերացումն Մեծն Տիգրամայ որդւոյ՝ Նրոսեր Տիգրամի կեանաց. — Իր ապստամբութիւնը. — Իր ծերրակայումը. — Նրոսերն Տիգրամ ի Հոռմ. — Ասկոմիոս Պետիմոսի մէկ ամստեսած վկայութիւնը իր փախստեամ մասին.

Տիգրան Մեծն (95—56... Ն. Ք.) քաշի որ երիտասարդական կրողն ունէր իւր բազկացը մէջ՝ հզօր և երջանիկ էր. բայց երբ ծերութիւնը զինքը կարօտ ըրաւ իւր որդւոց օգնականութեան, նորա համար սկսան ծախող օրեր, իւր որդիքը իրմէ նուազ փառասէր չէին: Մեծն կը փորձէնք, նոր յիշատակարանի մը հրատարակութեան առթիւ, անոնց միոյն քիչ ծախօթ նկարագիրը հոս ընծայել, ժամանակի դէպքերէն ջանալով միայն զանոնք շօշափել՝ որոնք սերտ յարաբերութիւն մ'ունին իրեն հետ:

Նա Միհրդատայ դուստր կղէոպատրայէն երեք որդի ունեցաւ, Զարիադը, որ քաշի մը նախարարներու հետ հօրը դէմ դաւկազմեց, որ յայտնուեցաւ. Զարիադը կուռի մէջ մեռաւ: Երկրորդ որդին, առաջնոյն պէս թագի ցանկացող, օր մը տեսնելով որ ծերունին Տիգրան որսի միջոց ձիէն ինկած և մարած էր, վազեց անոր թագը առաւ, իւր գլուխը դրաւ և սրովը մէջքը զարդարեց. ընդհակառակն Տիգրան կրտսեր, երրորդ որդին, մօտեցաւ իւր հօր, զայն վերցուց և խնամեց: Հայրը արթննալով իմացաւ եղածը. կտրել տուաւ երկրորդ որդւոյն գլուխը և Տիգրանը թագով

պսակեց. (անշուշտ Մոփաց և Կորդուաց վրայ թագաւորեցնելով):

Սակայն քիչ ատենէն յայտնի եղաւ՝ որ երրորդին սէրն ալ պարզապէս քաղաքագիտական էր. վասն զի Տիգրանակերտի առումէն (69 Ն. Ք.) վերջ ապստամբեցաւ նա իւր հօրմէն, և Արտաշատու մէջ կ'ուզէր թագ կապել: Մերունի արքայն ստիպուեցաւ ի վէճ գալ իւր կրտսեր որդւոյն հետ. պատերազմի մէջ յաղթեց անոր՝ իւր՝ ասիական զէնքերու յաղթող բազկովը: Տիգրան կրտսեր փախչելով ապաւինեցաւ իւր աներոյն, Պարթեաց Հըրաշատ Գ.ի (70—57 Ն. Ք.) քով: Նա շարժեց Պարթեւը իւր հօրը դէմ, որ արդէն ո՞ր ունէր յափշտակուած երկիրնէն իւր համար, և Տիգրան կրտսեր և Հըրաշատ Պարթեական բանակներու և Հայ փախստէից գլուխ անցած՝ դիմեցին ուղակի Արտաշատու վրայ (66): Մերունին Տիգրան առատ պաշարով քաղաքը ապաւինելով՝ պահպաններ թողուց հոն, և ինքն բանակովը քաշուեցաւ լեռներու մէջ:

1. Ապպիան. « Միհրդ. » 154: — Վազերիոս Մաքսիմոս. Թ. 11:

Հրահատ բաւական ժամանակ քաղաքը ի զուր պաշարելէ յուսահատած՝ իւր բանակին կէսը թողուց Տիգրան կրտսերի որպէս զի պաշարումը շարունակէ, իսկ ինքն մնացելովը հեռացաւ ի Պարթեւս։ Այս տեսնելով ծերունին Տիգրան՝ իջաւ լեռներէն զօրաւոր բանակով մը։ Արտաշատու պարիսպներուն տակ արինահեղ պատերազմ մը եղաւ այնուր հօր մը՝ որ իւր անցեալ յաղթանակները կը յիշէր, և փառասէր որդւոյ մը մէջ, որ գեղեցիկ բայց անիրաւ յոյսերու համար կը նահատակէր։

Յաղթանակը ծերունին տարաւ։ Իսկ որդին նախ փախաւ իւր մայրենի պապուն — Միհրդատայ — քով, բայց զայն եւս այդ պահուն տագնապիւր և փախստեան մէջ զբտնելով՝ մատուցեալմբ դիմեց առ Պոմպէոս¹։

Պոմպէոս այդ ժամուն Միհրդատայ զօրծը վերջացուցած՝ Հայաստան մտնելու վերայ էր և Տիգրանայ պէս ատաշնորդի մը պէտք ունէր։ Հռովմայեցիք իշկեղեցի գաւառէն մտան Հայաստան և դիմեցին Արտաշատ։ Տիգրան Մեծն իբրեւ բարեկամ ընդունեցաւ զՊոմպէոս և թոյլ տուաւ որ Հռովմայեցիք անարգել մտնեն և ելնեն իւրեն մայրաքաղաքը։ Եւստոյ խնդրեց Պոմպէոսէն որ նա դատաւոր ըլլայ որդւոյն և իւր մէջը։

Տիգրան կրտսեր կը յորդորէր զՊոմպէոս որ հօր բան մը չգիշանի, բայց Հռովմայեցիին մտիկ չըրաւ իրեն։ Դատարեմը կազմուած էր Հռովմայական բանակին մէջ։ Կրտսերը որ Պոմպէի ձախակողմը նստած էր, հօրը եկած վայրկենին ոչ ոտը ելաւ և ոչ ալ յարգանքի որ և է ցոյց մը տուաւ։ Հայոց և Հռովմայեցւոց մէջ դաշնադրութիւնը դրուեցաւ։ Ծերունին պիտի իշխէր իւր հօրմէն ժառանգած բոլոր երկիրներու վրայ, և միայն Եթովպաց և Կորդուաց մէջ պիտի թագաւորէր որդին՝ Կրտսերն Տիգ-

րան, և սա ժառանգ պիտի ըլլար յետոյ հայկական մեծ թագին։

Դաշնադրութիւնը և դատը վերջանալէն յետոյ՝ Պոմպէոս ճաշի հրաւիրեց երկուքն ալ։ Տիգրան կրտսեր չգնաց հոն, վասն զի իւր մեծագոյն ակնկալութիւնները ի դերեւ հանած էր Հռովմայեցի սպարապետը, և պատերազմի տուգանքը, 6000 տաղանդը, պիտի վճարուէր այն գանձերէն՝ որոնք Եթովպաց մէջ պահուած էին։ Այս դժկամակութեան վրայ գաղտնի բանագնացութիւններ եւս աւելցուց նա. պատգամաւորներ զրկեց Պարթեւաց և Աղուանից թագաւորին՝ որ Հռովմայեցւոց դէմ ելնեն, և Հայ նախարարներու աջակցութիւնը խնդրեց։ ասոնք զինքը յորդորեցին որ դարանի մտնէ զօրքով՝ և յանկարծուստ հօրը վրայ յարձակելով՝ սպաննէ զայն²։

Պոմպէոս իմացաւ այս ամէնը, և անզուսպ երիտասարդը ազատ հսկողութեան տակ առաւ։ Եւստոյ մարդ զրկեց ամրոցներու պահապաններուն՝ որ գանձերը հօր յանձնեն։ Անոնք մտիկ չըրին և ըսին թէ այս գանձերը որդւոյն են, վասն զի նա է թագաւոր այս տեղւոյն։ Այն ատեն Պոմպէոս պահապաններու հսկողութեան տակ զՏիգրան կրտսեր զրկեց որ հրամայէ։ Նա ակամայ հրամայեց և բերդապահը դարձեալ չուզեցին տալ, իրենց տէրը՝ «բռնադատուած» նկատելով։ Այս բանը ծանր եկաւ Պոմպէի։ շղթայի զարկաւ գիրտսերն Տիգրան։ Իսկ ծերունին գնաց զբաւեց բերդերը, ժողովեց գանձը և հատոյց տուգանքը³։

Պոմպէոս յետ զՀայս առանց զինուց նուաճելու, գնաց դէպ ի Վրաստան և Աղուանք, Միհրդատը հալածելու համար։ Աղուանից թագաւորը Որոզ (Վարազ?), որ բարեկամ էր Կրտսերոյն Տիգրանայ, ահագին բանակ մը կազմեց և եղանակին (ղեկսեմբեր էր) ցրտութենէն օգուտ քա-

1. Դիոն Կասսիոս. I Զ. 34. — Տիտոս Լիւիոս. « Համառոտութիւնք » 100։

2. Պլուտ. « Պոմպ. » 284-5 (հայերէն թարգմ. վե.

նեւ.)։ — Ապպիան. « Միհր. » 154-5։ Դիոն. I Զ. 35-6։

3. Դիոն. I Զ. 36։

ղեկով, երեք կողմէ յարձակեցաւ Հռովմայեցոց վրայ. իր զլխաւոր նպատակներէն մին էր Տիգրանը ազատել. ինքը յարձակեցաւ Մետեղլոսի բանակաթիւին վրայ, ուր կը գտնուէր Տիգրան, և մեծ սարսափ ձգելէն վերջ՝ կտորարծով յաղթուեցաւ հռովմէական կրթութիւնէն և ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել:

Այսպէս ուրեմն երիտասարդ Տիգրանը այս փորձով ալ չազատեցաւ. նաեւ իւր աներոջ Հրահատայ բողոքներն և խնդիրքը՝ ընդունայն ելան. նա կը պահանջէր Պոմպէյէն իրեն աւանդուիլը՝ իւր զստեր, իւր թոռնուհոյն և իւր փեսային, որոնք սակայն շղթայակապ Հռովմ տարուեցան, ի զարդ յաղթանակին Պոմպէի՝ Հրահատ ի վրէժ իրեն եղած նախատանաց, կրտսերի համար՝ Մեծին Տիգրանայ վրայ յարձակեցաւ. նախ պարտուեցաւ անկէ, բայց յետոյ ինքն զօրացաւ: Իսկ Տիգրան Մեծին՝ իւր որդւոյն ապստամբութիւնը Միհրդատէն զրգուած կը համարէր:

*

Յարգ մեր տեղեկութիւնները կրտսեր Տիգրանայ մասին հոս կը զարդէին և Ասկոնիոս Պետիանոս, Հռովմայեցի մատենագիր Ա. դարու, (մեռած 88ին Յ. Ք.), կուզայ իւր հատակոտորով մը այս հայկական ողբերգութեան վրայ՝ ուրիշ տեսարան մ'ալ աւելցնելու: Ահաւասիկ անոր բառացի թարգմանութիւնը:

« Պոմպէյոս, Միհրդատեան յաղթանակէն վերջ, Տիգրանայ որդին շղթայապիւրկ Փլաւիոս՝ ծերակուտի անգամին ջուղ պահած էր. սա՛ յետոյ երբ պրիտորը (== քաղաքապետ) եղաւ, այն տարին՝ յորում կողոզիտ

տրիբուն ժողովրդեան (58), ճաշկերոյթի մը ժամանակ խնդրեց կողոզիտ իրմէ, որ Տիգրանը բերել հրամայէ, որպէս զի զայն տեսնէ: Բերուածը սեղանի բազմեցուց, յետոյ Փլաւիոսին ետ չդարձուց, (այլ իւր ապարանքը) խրկեց և շղթայազերծ պահեց, և ոչ իսկ Պոմպէյոսի տուաւ՝ որ զայն ետ կը պահանջէր: Յետոյ նա մը դրաւ զայն. և երբ նա կը փախչէր՝ փոթորկէ մղուելով՝ բերուեցաւ Անտիոնիմ³. կողոզիտ, որպէս զի զայն իրեն բերեն, խրկեց Սեքստոս կողոզիտը որուն նկատմամբ վերը խօսեցանք: Եւ և Փլաւիոս, հանդիպածը իմանալով, Տիգրանը յափշտակելու գնաց. (Ապպեան ճանապարհի վրայ) չորրորդ քարին՝ մօտ կռիւ եղաւ, յորում բազումք երկու կողմէն սպաննուեցան, սակայն բազմազոյնը Փլաւիոսի կողմէն, յորս էր և Մ. Պապիրիոս ասպետ Հռովմայեցի և մաքսապետ՝, ընտանի Պոմպէյոսի: Փլաւիոս հազիւ կրցաւ միայնակ Հռովմ փախչիլ՝ »:

Քանի որ կողոզիտ ողջ էր՝ հարկ է թէ Տիգրան անոր հսկողութեամբ ազատ կեանք մը անցուցած ըլլայ. սակայն նորա բռնի յափշտակուիլը, արիւնիով ազատեց և Պոմպէյոսին ետ տարուիլը՝ շատ մեծ շփոթութիւններ ձգած է Հռովմայ մէջ, և կարծեմ զայս կը նշանակէ կիկերոնի նամակ մը, ուր կ'ըսէ թէ Տիգրանը թողուելով՝ ամէն կարգ և օրէնք վերցաւ⁴:

Բայց կողոզիտ ալ, որ Հռովմայ մէջ գրեթէ դիկտատորական իշխանութիւն կը բանեցնէր, շատ չապրեցաւ. Միլոն զինքը սպաննեց (52) և Պոմպէյոս հիւպատ եղաւ: Տիգրանայ վերջը անձնաթիւ է:

Հ. Յ. ԱՍՏՈՐԻՆՍ

1. Դիոն. ԼՂ. 37:

2. Հոս քնադիրը քիչ մը խառնակ է. Antium անուըր ոմանք tantum կը կարգան որ հոս մասնաւոր իմաստ մը չունի. մենք Antium ընթերցումը ընտրելազգին համարեցանք, որ շատ լաւ կը պատշաճի հոս: Այդ ժամանակ Անտիոմը նշանաւոր նաւահանգիստ էր Տիւրքիանան ծովու վրայ, 50 քիլոմետր հեռաւ որովհետեւ Հռովմէն. այժմ փոքրիկ քաղաք խաշախան, Porto d'Anzio.

3. Ապպեան ճանապարհի անուըր նիւթապէս չէ գրած հեշիւնակը. բայց երկրորդական ճամբայ մը՝ Անտիոմէն

Ապպեան ճանապարհի վրայ կը հանէր, որուն վրայ որչափ և հեռաւորութեամբ քարեր դրուած էին ճամբուն երկայնութիւնը չափելու համար, քնադէս իմայ շատ տեղ քիլոմետրի քարեր տնկուած են: Այս քարերէն չորրորդին քով կ'ըլլայ կռիւը (pugna):

4. Eques Romanus (Ապպետ Հռովմայեցի) այդ ժամանակ կը նշանակէր մեծ վաճառական, իսկ publicanus (մաքսապետ), սեղանափառաւ:

5. Asconii Pediani Expositio in Orationem (Ciceronis pro Milone, p. 86, Venetiis MDLIII).

6. Կիկերոն առ Ատտիկոս, Գ. 8: